ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ»

(Ընդունված է 2018 թվականի մարտի 23-ին)

Հոդված 5. Պետական մարմնի քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցությունը, գույքը

~~5. Պետական մարմնի, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաև ենթակա պետական մարմնի գույքը ձևավորվում է օրենսդրությամբ սահմանված կարգով՝ նրա տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից:~~ 5. Պետական մարմնի, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նաև ենթակա պետական մարմնի գույքը ձևավորվում է օրենսդրությամբ սահմանված կարգով՝ նրա տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) շարժական գույքից և Կառավարության սահմանված կարգով վարձակալությամբ տրամադրված անշարժ գույքից:

6. Պետական մարմնի գույքը հանձնվում է կամ վարձակալությամբ է տրամադրվում իրավական ակտին համապատասխան, որը Կառավարության սահմանած կարգով հաշվառվում է նրա հաշվեկշռում:

7. ~~Սույն օրենքով սահմանված կառավարման լիազորություն ունեցող սահմանադրական մարմինը, պաշտոնատար անձն իրավունք ունեն հետ վերցնելու պետական մարմնին, ենթակա պետական մարմնի համար ձեռք բերված գույքը և այն հանձնել պետական այլ մարմնին կամ Կառավարությանը:~~

7. Սույն օրենքով սահմանված կառավարման լիազորություն ունեցող սահմանադրական մարմինը, պաշտոնատար անձն իրավունք ունեն հետ վերցնելու պետական մարմնին, ենթակա պետական մարմնի համար ձեռք բերված շարժական գույքը և այն հանձնել պետական այլ մարմնին կամ Կառավարությանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և Կառավարության սահմանված կարգի համաձայն դադարեցնել անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը:

8. Պետական մարմինը, ենթակա պետական մարմինը, սույն օրենքով և իրենց կանոնադրության համաձայն, իրենց գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան, պետք է օգտագործեն, տիրապետեն, իսկ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ տնօրինեն իրենց հանձնված կամ վարձակալությամբ տրամադրված գույքը:

Հոդված 9. Պետական մարմնի, ենթակա պետական մարմնի կառավարման լիազորությունները

1. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանադրական մարմինները կամ պաշտոնատար անձը՝

1) հաստատում է պետական մարմնի, ենթակա պետական մարմնի, ինչպես նաև գրասենյակի կանոնադրությունը և կատարում կանոնադրության փոփոխություններ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

2) հաստատում է պետական մարմնի, ենթակա պետական մարմնի, ինչպես նաև գրասենյակի կառուցվածքը և սահմանված կարգով կատարում կառուցվածքային փոփոխություններ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

3) օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված գործունեության ոլորտին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ սահմանում է պետական մարմնի և ենթակա պետական մարմնի գործունեության հիմնական ուղղությունները.

4) իրականացնում է պետական մարմնի և ենթակա պետական մարմնի գործունեության վերահսկողությունը.

5) լսում է պետական մարմնի և ենթակա պետական մարմնի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է գործունեության ստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում պետական մարմնին և ենթակա պետական մարմնին ~~ամրացված կամ օգտագործման հանձնված~~ հանձնված կամ վարձակալության տրամադրված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

~~5. Պետական մարմին, ենթակա պետական մարմին հանձնվող գույքի կազմը և չափը որոշում է Կառավարությունը: Կառավարությունը որոշում է նաև հանձնվող գույքի օգտագործման և տիրապետման կարգը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:~~ 5. Պետական մարմին, ենթակա պետական մարմին հանձնված շարժական, ինչպես նաև վարձակալությամբ տրամադրվող անշարժ գույքի կազմը և չափը որոշում է Կառավարությունը: Կառավարությունը որոշում է նաև հանձնվող կամ վարձակալությամբ տրամադրվող գույքի օգտագործման և տիրապետման կարգը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 12. Գլխավոր քարտուղարը

5. Գլխավոր քարտուղարը՝

1) առանց լիազորագրի՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմաններում հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, կնքում է գործարքներ, իր իրավասությանը վերապահված հարցերով տալիս է լիազորագրեր.

2) օրենքով, այլ իրավական ակտերով և կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է պետական մարմնին ~~ամրացված~~ հանձնված կամ վարձակալած պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

Հոդված 15. Հանրապետության Նախագահի և վարչապետի աշխատակազմի ղեկավարի լիազորությունները

8. Աշխատակազմի ղեկավարը՝

1) պատասխանատու է աշխատակազմի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

2) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

3) օրենքով, իրավական այլ ակտերով և կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է աշխատակազմին ~~ամրացված~~ հանձնված կամ վարձակալած պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

Հոդված 23. Պետական մարմնի գործունեության դադարումը

3. Գործունեությունը դադարեցրած պետական մարմնի քաղաքացիաիրավական իրավունքները, պարտականությունները և ~~ամրացված~~ հանձնված գույքը փոխանցվում են Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության: